

**Ամփոփիչ քննությունների առցանց հանձնման պարագայում ուսանողների գիտելիքների
գնահատման բողոքարկման ընթացակարգ**

Ուսանողների կողմից ամփոփիչ քննությունների հանձման արդյունքների բողոքարկումն իրականացվում է համաձայն ՀԱՊՀ-ում հաստատված «Ուսանողների գիտելիքների գնահատման բողոքարկման ընթացակարգ»-ի: Միաժամանակ հաշվի առնելով, որ 2019/20 ուս. տարվա ամառային քննաշրջանի ամփոփիչ քննությունները կազմակերպվում են առցանց ստորև ներկայացվում է տեղեկատվություն գնահատականի բողոքարկման ընթացակարգի մասին

1. Համալսարանի կայքից ուսանողը ներբեռնում է [բողոքարկման դիմումի ձևաթերթը](#) և լրացնում այն:

2. Բողոքարկման դիմումը ուսանողն ուղարկում է քննության ավարտից հետո 24 ժամվա ընթացքում, եթե բողոքը վերաբերում է իր ստացած գնահատականին, իսկ եթե բողոքարկումը պայմանավորված է տեխնիկական խնդիրներով, ապա՝ ներկայացնում է քննության ավարտից ոչ ուշ քան 1 ժամվա ընթացքում:

3. Ուսանողի ստացած գնահատականի բողոքարկմանը վերաբերող դիմումը ընդունելուց հետո, 24 ժամվա ընթացքում, համապատասխան մասնաճյուղի, ինստիտուտի տնօրենի/ֆակուլտետի ղեկանի նախագահությամբ, կամ իր երաշխավորությամբ ձևավորվում է բողոքարկման հանձնաժողով՝ կազմված ամբիոնի վարիչից և առարկան դասավանդող դասախոսից և ուսխորհրդի ներկայացուցիչից: Նույն օրը կազմակերպվում է հարցի քննարկում: Հանձնաժողովը ստուգում է ուսանողի պատասխանած թեստերի գնահատման համապատասխանությունը չափանիշներին և կայացնում որոշում՝

- գնահատականը թողնել անփոփոխ,
- գնահատականը փոխել (բարձրացվում է կամ իջեցվում):

4. Քննության ընթացքում առաջացած տեխնիկական խնդիրներով բողոքարկման դիմումները 24 ժամվա ընթացքում քննարկում է *քննաշրջանի կազմակերպման համալսարանական հանձնաժողովը* և կայացնում որոշում,

- քննությունը չի կայացել օբյեկտիվ տեխնիկական խնդրի պատճառով (ուսանողին տրվում է հնարավորություն հանձնելու քննությունը),

- քննության ժամանակ օբյեկտիվ տեխնիկական խնդիրներ չեն գրանցվել, կամ դրանք ստեղծվել են ուսանողի կողմից միտումնավոր՝ դիմումը մերժվում է (ուսանողը հնարավորություն ունի լիկվիդացիայի շրջանում հանձնելու քննությունը):